

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՄՇԱԿՈՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կը կամենայինք այս բաժինը սկսել տեղեկութիւններով Հայաստանի մշակոյթի մասին, բայց, դժբախտաբար, վերջին երկու տարին մշակոյթի զարգացումը Հայաստանում բոլորովին կանգ է առել: Հայ լուսագոյն գրողների, արւեստագէտների, գիտութեամբ զբաղւողների մեծ մասը բանտում է, ումանք, բերես, եւ գնդակահարած: Մշակոյթին ծառայող հաստատութիւններն ու կազմակերպութիւնները «մաքրագործւած»՝ աւերի են ենթարկւած: Հայ մշակոյթի գործը մատնւած է ռուսաց-

ման: Խնքնուրոյն աչքի զարնող հրատարակութիւններ չկան: Մեկնման փոնդը լուծւած է եւ այլեւս նոր գրքեր չի տալիս: Հայ գիտութիւնը, գրականութիւնը, արւեստը, հոգեւոր ստեղծագործութեան բոլոր բնագաւառները ամայացած են: Լուրջ պարբերականներ չկան: Մամուլը լեցում է քարգամութիւններով ռուսերէն քերքերից, եւ պաշտօնական լուրերով ու ճառերով: Ո՛չ մի կենդանի միտք, ո՛չ մի ոգեւորող խօսք: Զարեւորելի է Հայաստանի մշակոյթի այսօրւայ վիճակը:

Ա. ԶՈՊԱՆԵԱՆԻ ՅՈՒՆԵՍԿՈՒՆԸ

Եկող մայիսին, Փարիզում, պիտի տօնւի Պ. Արշակ Զօպանեանի գրական գործունէութեան յիսնամեայ յորելեանը: Կազմակերպիչ Յանձնաժողովի մեզ ուղարկած շրջաբերականից տեղեկանում ենք, որ յորելեանի հանդէսը տօնելու է Սորբոնի ամփիթատրոնում, Մայիս 14-ին:

Յանձնաժողովը որոշել է կազմել փրբանսացի մտաւորական եւ ֆալսական անձնաւորութիւններից հովանաւորող մի մարմին, որին անդամակցելու են նաեւ Փարիզի երեք հայ կրօնապետները: Մի շարք ականաւոր փրբանսացիներ, ինչպէս Մարիուս Մուրէ, Ժորժ Դիւհամէլ, Հանրի Բորդօ, Շարլ Դիլ, Ռընէ փինոն եւ ուրիշներ ստանձնել են յորելեանի պատուը նախագահութիւնը:

Կազմակերպիչ Յանձնաժողովի որոշումով յորելեանի հանդէսներ պիտի կատարւին եւ Փարիզից դուրս, հայկա-

կան կարեւոր կենտրոններում:

Կազմակերպիչ Յանձնաժողովի մէջ դրւած են հետեւեալ անձնաւորութիւնները.

Հ. Սահակ Տէր Մովսէսեան, Տ. Լեւոն Բինյ. Արսլանեան, Տիկիններ Ն. Գաբամանեան, Ե. Աւետիսեան (Անայիս), Մ. Կիւլպէնկեան, Ա. Բուդաղեան, Ա. Բաբայեան (Կարպոնէլ), Էլլէն Բիւզանդ, Օրիորդներ Մ. Բաբայեան, Հ. Թորոսեան, Գ. Ղազարոսեան, Ի. Պիւլպիւեան, Զարեհ պէյ Նուպար, Փրոֆ. Կ. Աղաջանեան, Տոքթ. Յ. Արքիմեան, Պ. Պ. Տ. Ալեքսանեան, Գ. Ալեմշահ, Ֆ. Աղապարեան, Գ. Աքմանեան, Պ. Արսլանեան, Վ. Անդրէասեան, Լ. Բաշալեան, Կ. Յ. Բասմաջեան, Գ. Բարունակեան, Ա. Բարսեղեան, Ա. Խան Գորոյեանց, Մ. Կոյունեան, Ռ. Զարդարեան, Պ. Զարոյեան, Վ. Էսմիրեան, Ռ. Թադէոսեան, Բ. Թօփալեան, Վ.